

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/8

7 մայիսի 2013թ.

Քննարկվեց «Նաիրիի ՃՇՇ» ԲԲԸ բողոքը «ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՀՏ 04.04.2013թ-ի թիվ 1008276 ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«Նաիրիի ՃՇՇ» ԲԲԸ բողոքում մասնավորապես նշված է.

Ստուգման ընթացքում հարկվող շահույթը որոշելիս ստուգողների կողմից ամորտիզացիոն մասհանումները չեն կատարվել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի առաջին կետի այդ պահին գործող նորմի համաձայն, ըստ որի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների չափով, այլ հաշվարկները կատարվել են ըստ դուրս գրված վառելիքի: Ընկերության մեքենա-մեխանիզմներն ամբողջ տարվա ընթացքում շահագործվել են, որի համար ընկերությանը ճանապարհների սպասարկման և պահպանման դիմաց ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից կատարվել են ամենամսյա վճարումներ:

Ընկերությունը հիմնավոր է համարում նաև ստուգման ակտում չհիմնավորված ամորտիզացիոն ծախս դիտարկված 23.541.300 դրամից 23.312.795 դրամը, այսինքն՝ չհիմնավորված ամորտիզացիոն ծախս պետք է դիտարկել ընդամենը 228.505 դրամը: Ստուգող մարմինն ակտին կից տեղեկանքում նշել է, որ ընդամենը Ընկերության կողմից ամորտիզացիան հաշվարկվել է 67.442.168 դրամ, սակայն շահութահարկի հաշվարկով որպես ծախս ներկայացվել է 62.186.960 դրամ: Տարբերությունը՝ 5.255.208 դրամը, ի սկզբանե Ընկերությունն ընդունելով ոչ հիմնավոր չէր ձևակերպել իրացմանն անհրաժեշտ ծախսերով և ավելի մանրակրկիտ ստուգումից պարզվեց, որ այն կազմում է 5.483.713 դրամ (համապատասխան հաշվարկը կցվում է):

Ընկերությանը պատկանող մեքենաների և մեխանիզմների ամորտիզացիաների հաշվարկը ճիշտ չի կատարվել, քանի որ հաշվի չի առնվել Ընկերության մեքենա-մեխանիզմների առկա ուղեգրերը և համապատասխան քարտերը, համաձայն որոնց հիմնավորվում է մեքենա-մեխանիզմների իրացմանն անհրաժեշտ շահագործումը (փաստաթղթերը կցվում են):

Ընկերության Նոր Գեղիի ավազի և բազալտի խճի հանքավայրում գործող (աշխատող) և ընկերությանը պատկանող սարքավորումների 3 ամսվա ամորտիզացիան չի հաշվարկվել, պատճառաբանելով որ չի կատարվել հանքարդյունահանում, սակայն վերոհիշյալ ամիսներին հանքի սարքավորումները շահագործվել են կատարելով խոշոր ֆրակցիայի խճի մանրացման աշխատանքներ, ինչն ակնհայտ երևում է խճի մնացորդի շարժի հաշվետվությամբ և սարքավորումների մեքենավարներին հաշվարկված և վճարված (նշված ժամանակահատվածի համար) աշխատավարձի տեղեկագրերով (կցվում է):

Ընկերությանը պատկանող ք.Եղվարդում գործող ասֆալտի գործարանում տեղակայված և գործող (աշխատող) սարքավորումների 3 ամսվա ամորտիզացիան չի հաշվարկվել պատճառաբանելով, որ այդ ժամանակահատվածում գործարանն արտադրանք չի տվել, սակայն վերոհիշյալ ամիսներին գործարանի սարքավորումները շահագործվել են, քանի որ կատարված ուսումնասիրություններից պարզվել էր, որ 2010 թ-ին Նոր Գեղիի հանքավայրից Եղվարդի ասֆալտի գործարան տեղափոխված խճի և ավազի փոշու պարունակությունը նորմայից բարձր էր, և այդ պատճառով Ընկերությունը որակյալ ասֆալտը ետոն արտադրելու և քիտումի գերնորմավորված ծախս չունենալու նպատակով 2011 թ-ի առաջին եռամսյակում ասֆալտի գործարանում կատարել է խճի և ավազի փոշեզրկում, ինչպես նաև տեխնիկական սպասարկման նորմերով նախատեսվում է կարգաբերման և կարգավորման աշխատանքներ,

որի ընթացքում անխուսափելի է դառնում փորձնական նմուշի արտադրանքի ստացումը: Ընկերությունը կատարելով կարգաբերման աշխատանքները ստացել է որոշակի քանակությամբ ստանդարտներին չհամապատասխանող արտադրանք, որն էլ օգտագործվել է սեփական տարածքի բարեկարգման նպատակով: Վերը նշվածը հիմնավորող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:

Ընկերությունը հիմնավոր է համարում նաև 4.001.010 դրամ գումարով գազի ծախսը, քանի որ ստուգող հարկային տեսուչները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ վերոգրյալ գումարի գազը ծախսվել է Ընկերության մեքենաների շահագործման և փոսայցումների ու բիտումի հալեցման գործընթացի ժամանակ, ինչպես նաև օգտագործվել է ասֆալտի գործարանում:

Միաժամանակ 2011թ-ի սեպտեմբեր և 2012թ-ի մարտ ամսվա ԱԱՀ-ի տույժերը հաշվարկելիս հաշվի չի առնվել ստուգմամբ հայտնաբերված 2012 թ-ի ապրիլ ամսին առաջացած 1.210.630 դրամի գերավճարը, որը հաշվի առնելու դեպքում արձանագրված տույժերը կկազմեն 2011թ-ի սեպտեմբեր ամսին 220.449 դրամ 361.116 դրամի փոխարեն և 2011թ-ի դեկտեմբեր ամսին 438.689 դրամ 624.108 դրամի փոխարեն:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ 04.04.2013 թ-ի թիվ 1008276 ակտն մասնակի վերացնել (անվավեր ճանաչել)՝ ակտը պակասեցնելով 14.547.120 դրամի չափով, որից 14.221.034 դրամ շահութահարկի գծով և 326.086 դրամ սխալ հաշվարկված տույժերի գծով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.12.2012թ-ի թիվ 1008276 հանձնարարագրի <Նաիրիի ՃՇՇ> ԲԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 04.04.2013թ-ին կազմվել է թիվ 1008276 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 40.851.160 դրամ, ինչպես նաև 1210630 դրամ պակասեցման ենթակա ԱԱՀ-ի գումար:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ընկերության կողմից ներկայացրած սկզբնական փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը 2011 թ-ի համար Նաիրիի ՏՏՏ ներկայացրած շահութահարկի հաշվարկում համախառն եկամուտից նվազեցվող ծախսերը ավել է ցույց տվել 33289155 դրամի չափով, որից 5746845 դրամը համախառն եկամտի ստացման հետ կապ չունեցող, սակայն փաստաթղթերով հիմնավորված բիտումի ծախսեր, 23541300 դրամը՝ ավել հաշվարկված ամորտիզացիոն ծախսեր և 4001010 դրամը՝ գազի չհիմնավորված ծախսման գումար: Խախտվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի արդյունքում 2011 թ-ի հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 33289155 դրամի չափով: Համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի հաշվարկվել է շահութահարկ 6657831 դրամի չափով:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրոյթները շահութահարկի գծով ենթակա է բյուջե վճարման ընդամենը 17.332.122 դրամ:

Սույն բողոքի քննարկման ընթացքում պարզվեց, որ տեղի է ունեցել ընկերության հաշվապահի փոփոխություն, որի հետևանքով ստուգման ընթացքում հնարավոր չի եղել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց ներկայացնել ստուգվող ժամանակաշրջանին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Սույն բողոքին կից ընկերության կողմից ներկայացվել են այն բոլոր փաստաթղթերը, որոնք չեն ներկայացվել ստուգման ընթացքում: Ընկերության ներկայացուցիչները միջնորդեցին Հանձնաժողովին ուսումնասիրել լրացուցիչ ներկայացված փաստաթղթերը,

հաշվի առնել դրանցում արտացոլված տվյալները և կատարել ստուգման ակտով առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ:

Հիմք ընդունելով բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ստուգման ակտի 1-ին կետից ենթակա է նվազեցման ընդամենը 12.137.888 դրամ, այդ թվում՝ շահութահարկ 4.662.559 դրամ, տուգանք 100% 4.662.559 դրամ, տուգանք 10% 466.256 դրամ, տույժեր 2.346.514 դրամ:

Ինչ վերաբերվում է ընկերության բողոքում բերված պնդումներին, կապված ավելացված արժեքի հարկի գծով հաշվարկված տույժերի վերահաշվարկման, ինչպես նաև ընկերության մեքենաների շահագործման հետևանքով ծախսված գազի գծով գումարները որպես ծախս ընդունման հետ, ապա դրանք հիմնավոր չեն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՏՏ 04.04.2013թ-ի թիվ 1008276 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել ընդամենը 12.137.888 դրամ, այդ թվում՝ շահութահարկ 4.662.559 դրամ, տուգանք 100% 4.662.559 դրամ, տուգանք 10% 466.256 դրամ, տույժեր 2.346.514 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

